

Կարուղիկեն Անւոյ. — Cathédrale d'Ani.

Թեամբ. 'ի յատակէ ձորոյն 'ի վերայ քարաժեռից ամբառնան հիւսիսային և արևմտեան որմունք նորա, յորոց առաջինն ևեթ կանգուն կայ, իսկ հարաւայինն իսպառ անկեալ է. 'ի վերայ հիւսիսային պարըսպացդ կայ քանդակ պատկերի զինուորակերպ առն՝ որոյ գլուխ 'ի բաց առեալ է, և Թուի 'ի ձեռին ունել զձև քաղաքին զդասակերտի իւրոյ. իսկ գուռն ապարանիցն յարևելից է սառակինեան ոճով՝ 'ի սեաւ և 'ի գեղին քարանց և պատուհան մեծ 'ի վերայ նորա, խուռն և խիտ դրուագօք զարդուց և խաչաձևանօք, վայելուչ յոյժ. կայ և ներքնատուն ապարանից մեծագործ և ահեղ, և բովանդակ իսկ քաղաքին կարծի լինել ներքնափոր, իբրու կրկնայարկ, ամարայնոյ և ձմերայնոյ զատուցեալ որիշ, որպէս աւանդեն. երևի ցարդ և զարմանաշէն գեանուղին որ հանդոյն Դամիզայն Լոնտոնի՝ անցանէ ընդ Ախուրեան գետով, 'ի հարաւոյ կուսէ քաղաքին զմուան ունելով, և զելն իբր երկուց ժամուց ճանապարհաւ բացագոյն 'ի կողմանս Թաշնոյ (129), որ արդ կիսով խցեալ է և Կէոէր-Ղեմէդ կոչի 'ի ռամկաց։ Ի հարաւոյ արքունեացն 'ի քարափան գետոյն կայ աւերակ միջնաբերդին, որոյ հիմունք պարսպացն և եկեղեցւոյ միոյ ևեթ կանգուն կան, և նշմարին հետք որ տանին 'ի մեծամեծ բրգունս յարևմտեան հարաւային ծայր քաղաքին։ Իսկ 'ի հիւսիսոյ կողմանէ արքունեացն 'ի զառիվայր երեսս Ծաղկաց ձորոյն 'ի խճախառն քարին հատեալ են անթիւ սենեակք կամ կրպակք, զոր ոմանք գերեզմանս և այլք բնակարանս կարծեցին. երևին 'ի նոսա և խորշք կամ դարանք, և դրունք մտից յիրար։

Ի բազմաթիւ եկեղեցեաց և մատրանց քաղաքին՝ յորոց 40ին չափ երևէին և 'ի սկզբան դարուս, արդ հազիւ 15 նշմարին, և 'ի նոցանէ կիսով չափ միայն կանգունք. որոց առաջին է մեծութեամբ և շքով կաթուղիկէն Անւոյ յարևելեան հարաւ կոյս, հիմնարկեալ 'ի Սմբատայ Բ, և աւարտեալ 'ի Կատրամիդեայ դշխոյէ յամին 1008–9, երկայն քառակուսի ձևով, 110′ ընդ երկայնն արտաքուստ, և 72′ ընդ լայնն, համակ 'ի սրբատաշ Թուխ և գեղին քարանց ագուցելոց յիրար միապաղաղ երևութիւ. ունելով շուրջանակի հինգ ատիճանս ոտնաչափ լայնութեամբ. զներքին ձև և զգեղեցիկ չափակցութիւն մասանցն՝ զմի 'ի գեղեցկագոյն շինուածոց հայկական ճարտարպետութեան, զգործ քաջի արուեստաւորին Տրդատայ, ցուցցէ յատակագիծն. յորում որպէս երևինդ՝ սիւնք չորք ստուարք և բարձունք խաչաձև խարսխաբք և բազմանկիւն կողմամբք՝ զանազան հատորովք գունագոյն քարանց՝ ամբառնան զմեծամեծ կամարան, որոց Թիւք ձգին և յայլ վեց որմասիւնս, և այլ կամարք 'ի վերոյ նոցա՝ կրելով զգմբեթն հրաշակառոյց 92′ բարձր 'ի գետնոյ, և 28′ տրամագծաւ բոլորակին՝ յորմէ կախիւր ջահն բիւրեղեայ բերեալ 'ի Հնդկաց աշխարհէ, և 'ի վերայ գմբեթին մարդա-